Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Վարդգես Սամսոնյանին

«Բարեկամ» ՀԿ-ի նախագահ
Սերգեյ Հայրապետյանից
(Հասցե՝ ք. Գյումրի, Տ. Մեծի փողոց, 17/7)

Հարգելի՛ պարոն Սամսոնյան

Սույն թվականի մայիսի 18-ից 31-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ Գյումրիում երկրորդ անգամ անցկացվելու է «Գյումրու միջազգային թատերական փառատոն» նախագիծը, որի շրջանակներում Գյումրիի հանդիսականին կներկայացվեն հայաստանյան եւ միջազգային 16 թատրոնների եւ թատերախմբերի լավագույն ներկայացումները:

Փառատոնային ներկայացումների հիմնական բեմահարթակները Գյումրու դրամատիկական թատրոնի մեծ եւ փոքր բեմերն են, ներկայացումներ կլինեն նաեւ թատերական այլ հարթակներում, նախատեսված են նաեւ բացօթյա ներկայացումներ:

Փառատոնի ինֆորմացիոն աջակիցներն են Հայաստանի Հանրային, «Արմենիա» եւ «Շանթ» հեռուստաընկերությունները:

«Գյումրու միջազգային թատերական փառատոն»-ի պատշաճ կազմակերպման եւ անցկացման հարցում ակնկալում ենք ձեր համագործակցությունն ու ֆինանսական աջակցությունը՝ 2 000 000 /երկու միլիոն/ ՀՀ դրամի չափով:

Կից՝ ներկայացվում է անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը:
Առդիր՝ 1 նյութ:

«Բարեկամ» ՀԿ-ի նախագահ
Սերգեյ Հայրապետյան
23. 02. 2024թ.

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Քարտուղարություն
ՄՏԱԳՎԱԾ Է 23 02 2024 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ ԷՆ 3718

**Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

«Գյումրու միջազգային թատերական փառատոն» կազմակերպման և իրականացման ծախսերի

(2024 թ.)

| N | Ծախսերի անվանումը | Գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | **Միջազգային թատերախմբերի օրապահիկ և գիշերակաց,**<br>այդ թվում՝<br>օրապահիկ - 20 անձ * 5 օր * 5 հզ. = 500 հզ. դրամ<br>գիշերակաց - 20 անձ * 5 օր * 15 հզ. =1 500 հզ. դրամ | 2000.0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | 2000.0 |

ՀԿ Նախագահ Ս. Հայրապետյան